ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Այնթապ համայնք 6-րդ փողոց թիվ 47 շենք
(0236) 6-05-06, Ayntap_hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հունվարի 2013թվականի N 03-Ն

ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ «ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 21-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության «Իրավական ակտերի մասին» օրենքի 70-րդ հոդվածի դրույթներին համապատասխան. համայնքի ավագանին *որոշում է՝*

Տալ համաձայնություն Այնթապ համայնքի ավագանու 21 դեկտեմբերի 2012 թվականի « ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ» թիվ 21-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և լրացում՝ համաձայն հավելվածի:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՈՒՆԱՆ
2. ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ՎԱՀԱՆ
3. ԹԱՄՈՅԱՆ ՇԻՐԻՆ
4. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԵՅՐԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ
6. ՍՈՒՐՄԱԴՅԱՆ ՀԱԿՈԲ
7. ՍՈՒՐՄԱԴՅԱՆ ՀԱՅԿ
8. ՊԱԼԵՋՅԱՆ ԱՐՄԵՆ
9. ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ
10. ՍԱՀԱԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված 1
Այնթապ համայնքի ավագանու
2013 թվականի հունվարի 17-ի թիվ 3 որոշման

<<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հ Հ 1997 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-185 օրենքի / այսուհետ՝ Օրենք / 7-րդ հոդվածի <<զ>> կետը <<ոգելից>> բառից հետո լրացնել <<և ալկոհոլային>> բառերով, իսկ <<հանրային սննդի >> բառերից հետո՝ << և զվարճանքի >> բառերով:

Օրանքի 7-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ << ժդ >> և << ժե >> կետերով.

<< ժդ) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար.

ժե) Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար>>:

2) 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ << բդ >> ենթակետով.

<< բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 100.000 դրամ.>>.

3) 4-րդ կետի 1-ին ենթակետը << ոգելից >> բառից հետո լրացնել << և ալկոհոլային >> բառերով.

4) 5-րդ կետի <<ա>> ենթակետի << տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ >> բառերը փոխարինել << տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 0-350 դրամ մեկ քառակուսի մետրի համար >> բառերով.

5) 5-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ <<զա>> ենթակետով .

<< զա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000-6000 դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 0-ից 1000 դրամ :>>.

6) 9-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

<< Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50.000 – 100.000 դրամ:>>.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ՍԱՐԳՍՅԱՆ